



2016թ-ի փետրվարի 18-ին CCMS-ի(«Համայնքաին համախմբման և աջակցության կենտրոն » ՀԿ) գրասենյակում «Կանանց հիմնախնդիրները մարզերում » ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ « Կանայք ընդդեմ քաղցկեղի » դասընթաց : Ծրագիրն իրականացվում է « Կանանց ռեսուրսային կենտրոն » ՀԿ-ի կողմից , որի նպատակն է նպաստել հայ կանանց և աղջիկների հզորացմանը ,բարձրացնել մարզերում կանանց իրավունքների և խնդիրների մասին տեղեկացվածության մակարդակը, ստեղծել կանանց և տղամարդկանց համագործակցության հարթակ: Այս ծրագիրը բաղկացած է 5 փոքր ծրագրերից իսկ « Կանայք ընդդեմ կրծքագեղձի » դասընթացը հանդիսանում է ծրագրի մի մասը

, որը նպատակ ունի սոցիալապես անապահով երիտասարդ կանանց և աղջիկների շրջանում բարձրացնել իրազեկվածության մակարդակը կրծքագեղձի քաղցկեղի առաջացման պատճառների և կանխարգելման միջոցների մասին : Դասընթացի վայր Ալավերդի համայնքը պատահաբար չէր ընտրվել` հաշվի էին առնվել մեր տարածաշրջանում օդային ավազանի աղտոտվածությունը, որը նպաստում է քաղցկեղի առաջացմանը և հիվանդացության ցուցանիշները մեր տարածաշրջանում բավականին բարձր են : Դասընթացավարը մասնակիցներին ներկայացրեց կրծքագեղձի քաղցկեղ հիվանդության ինչպիսի դինամիկա է արձանագրվում այսօր , որքան է մահացության ցուցանիշը այլ երկրներում և Հայաստանում , արդյոք բուժելի է այս հիվանդությունը , տնային պայմաններում ինչպես կարելի է ինքնուրույն ստուգել կրծքագեղձը , ցուցադրված տեսանյութում ներկայացվեց ախտանշանները և արտահայտման ձևերը, ինչպիսի փոփոխություն է կրում կրծքագեղձը, տան պայմաններում ստուգումն ինչպես պետք է կատարել , ինչ նշանների ուշադրություն դարձնել և այլն :Բաժանվեցին ինֆորմացիոն բուկլետներ հիվանդության մասին:

Դասընթացի ավարտից հետո , մասնակիցներն անցան բուժզննություն` չարորակ նորագոյացություններ չեն հայտնաբերվել, սակայն մասնակիցների մեծ մասն ուներ կրծքագեղձի փոփոխություններ , հայտնաբերվել են նորագոյացություններ , այդ կանայք ավելի լուրջ և խորը մասնագիտական բուժզննության կարիք ունեն և այս ծրագրի շրջանակներում հրավիրվելու են Վանաձոր բուժզննությունն անվճար անցնելու համար: Դասընթացը և բուժզննությունն իրականացրեց Վանաձորի Բժշկական կենտրոնի ուռուցքաբանական բաժանմունքի վարիչ, Լոռու մարզի գլխավոր օնկոլոգ Նարինե Քալաշյանը:

